Մրցույթ «Երևանի Հ.Օշականի անվան թիվ 172 հիմն.դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (14 դասաժամ) և ֆիզկուլտուրայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցակցվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ.
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (Ձև 5)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փոստաթղթեր (առկայութան դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00 –ից 14.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14.00-ին** Երևանի Հ.Օշականի անվան հ.172 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան Մ.Բաղրամյան 59ա

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)-22-58-34